

**ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Երևան, 22-ր հոկտեմբերի, 2015թ.

**ԱԳՏՀ-ն խթանում է Հայաստան-Վրաստան Տարածքային Համագործակցության Ծրագրային Առաջարկների մրցույթի հաղթողների և միջազգային դոնոր կազմակերպությունների համագործակցությունը**

**2015թ. հոկտեմբերի 26-ին կկայանա Հայաստան-Վրաստան Տարածքային Համագործակցության Ծրագրի շրջանակում հայտարարված Ծրագրային Առաջարկների մրցույթի հաղթողների և դոնոր կազմակերպությունների հանդիպումը Երևանում՝ համաֆինանսավորման աղբյուրները գտնելու հարցում դրամաշնորհային ծրագրերին աջակցելու նպատակով:**

2015թ. սեպտեմբերի 25-ին Դիլիջանում մրցույթի հաղթողները ստորագրեցին համատեղ նախագծերի իրականացման դրամաշնորհի պայմանագրերը՝ կենտրոնական և մարզային իշխանության ներկայացուցիչներին, ինչպես նաև երկու երկրների ԶԼՄ-ների ներկայությամբ:

Մրցույթի շրջանակում կնքվել են պայմանագրեր չորս հայաստանյան և չորս վրացական գործընկեր կազմակերպությունների հետ, ում տրամադրվելու են ԵՄ դրամաշնորհները միջառնամանային տարածքային զարգացման ծրագրերի համար: ԵՄ-ի կողմից 1.35 մլն եվրո է հատկացված Հայաստան-Վրաստան Տարածաշրջանային Համագործակցության Ծրագրին՝ հասան սահմանային շրջաններում ընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերները հաղթահարելուն ուղղված համատեղ լուծումներ մշակելու նպատակով, մասնավորապես՝ խթանելու տնտեսական զարգացումը, գրավելու ներդրողներ Վրաստանի Քվեմո-Քարթլի շրջան և Հայաստանի Տավուշի մարզ, նորարարական զբոսաշրջային ուղիներ մշակելու, իրականացնելու Վրաստանի Սամցխե-Ջավախեթի և Հայաստանի Շիրակի մարզի բնական ռեսուրսների պահպանմանը, թափոնների վերամշակման կազմակերպմանը, երիտասարդության քաղաքացիական կրթության, գործազրկության խնդիրների լուծմանը և Գյումրիի ու Բոլնիսիի դեռահասների միջև հաղորդակցության ուժեղացմանն ուղղված ծրագրեր:

Հանդիպումը միտված է բարձրացնելու միջազգային դոնոր կազմակերպությունների իրազեկումը Հայաստան-Վրաստան Տարածքային Համագործակցության Ծրագրի վերաբերյալ և աջակցելու հաղթողներին այլ աղբյուրներից համաֆինանսավորում գտնելու հարցում:

Հաղթող ծրագրերի հայաստանյան գործընկերները կներկայացնեն իրենց նախագծերը Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային դոնոր կազմակերպություններին և տեխնիկական աջակցություն տրամադրող ծրագրերին:

Հրավիրում ենք ԶԼՄ ներկայացուցիչներին մասնակցել հանդիպմանը, որը կկայանա հոկտեմբերի 26-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի, Հիլթոն հյուրանոցում:

**Ծրագրի մասին:** Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակից ծրագիրը (ԱԳՏՀ աջակից ծրագիր) սկսվել է Մոլդովա-Ուկրաինա, Հայաստան-Վրաստան, Ադրբեյջան-Վրաստան և Բելառուս-Ուկրաինա երկրների սահմաններում տարածքային համագործակցության ծրագրի համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով հաշվի առնելով յուրաքանչյուր սահմանամերձ գոտու առանձնահատկությունները, ինչպես նաև ուժեղացնելու տեղական և տարածաշրջանային պետական և ոչ պետական մարմինների հնարավորությունները միջառնամանային ծրագրերը միասին զարգացնելու և իրականացնելու համար: ԵՄ ընդհանուր ներդրումը ԱԳՏՀ-ում 12.5 միլիոն եվրո է: Արևելյան գործընկերությունը (ԱԳ) Եվրոպական Միության նախաձեռնությունն է, որը ղեկավարվում է Արևելյան Եվրոպայի եւ Հարավային Կովկասի վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեյջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա: Նախաձեռնությունը նպատակ ունի ավելի սերտ հարաբերություններ ստեղծել ԵՄ և Արևելյան գործընկերության միջև՝ խորացնելով իրենց քաղաքական համագործակցությունը եւ տնտեսական ինտեգրումը:

Հայաստան-Վրաստան ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք ԱԳՏՀ հաղորդակցության փորձագետ Տատյանա Դերեվյանկինայի հետ:

tatiana.derevyankina@eaptc.eu  
<http://www.eaptc.eu>, <https://www.facebook.com/eaptc.eu>, [https://twitter.com/EaP\\_TC](https://twitter.com/EaP_TC)  
<http://www.linkedin.com/groups/EaPTC-5109143>

